01/10.1/4414-09

2009-07-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արևիկ Պետրոսյանի, Գալուստ Սահակյանի, Արմեն Մարտիրոսյանի, Վահան Հովհաննիսյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն առաջադրվող օրենքների նախագծերի փաթեթով ներկայացված օրենքները նպատակ ունեն կարգավորելու միևնույն հարաբերությունները, բովանդակությամբ փոխկապակցված են, և քվեարկության դրված փաթեթից որևէ օրենք միշտ չէ, որ կարող է համարվել առաջադրվող օրենք կամ նրան տրվել առաջնային դեր։

2. Առաջադրվող փաթեթում ներառված օրենքների նախագծերի քվեարկության հատուկ ընթացակարգն ընդունելի չէ, մանավանդ, որ դա իրականացվում է առանց նախագծերի փաթեթի հեղինակի համաձայնության կամ կարծիքի։ Քվեարկության դրված օրենքների նախագծերի փաթեթից որևէ օրենքի նախագիծը չընդունվելու դեպքում փաթեթում ներառված

մյուս օրենքների նախագծերի ընդունումը կարող է դառնալ ոչ նպատակահարմար, փաթեթով առաջարկվող հարաբերությունների կարգավորումը՝ ոչ լիարժեք։

Առաջարկությունը հակասում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ «եզրափակիչ ելույթում հեղինակը կարող է փոփոխության ենթարկել քննարկվող օրենքի նախագիծը՝ հանելով հոդված, կամ նախագծերի փաթեթը՝ հանելով օրենքի նախագիծ» և առաջարկություն ներկայացնել քվեարկության վերաբերյալ։

Նախագծով ներկայացված առաջարկության ընդունման դեպքում կխաթարվի օրենսդրական նախաձեռնության իրավունքի ինքնուրույնության ինստիտուցիոնալ տրամաբանության ամբողջականությունը։

3. Իրավական տեխնիկայի առումով 1-ին հոդվածով լրացվող բովանդակության համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, մասնավորապես, իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գ. Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-640-05.06.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Օրենքի նախագծերի փաթեթում կարող են ներառվել միայն այնպիսի օրենքների նախագծեր՝

ա) որոնց ընդունումը իրավական առումով բխում է առաջադրվող օրենքի նախագծից.

բ) որոնք իրավական առումով հակասում են առաջադրվող օրենքի նախագծին։»։

***Հոդված** 2.* Օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Ազգային ժողովի նախագահի, գլխադասային հանձնաժողովի առաջարկությամբ Ազգային ժողովը կարող է սահմանել օրենքի նախագծերի փաթեթում ներառված նախագծերի քվեարկության հատուկ ընթացակարգ, որի վերաբերյալ որոշումն ընդունվում է առանց քննարկման։»։

***Հոդված** 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը նպատակ ունի առաջարկվող ձեւակերպմամբ հստակեցնել օրենքի նախագծերի փաթեթում ներառվող նախագծերի շրջանակը, ինչպես նաեւ ապահովել այդ ձեւակերպմանը համապատասխան դրանց ընդունումը։

Հեղինակներ՝ Արեւիկ Պետրոսյան, Գալուստ Սահակյան, Արմեն Մարտիրոսյան, Վահան Հովհաննիսյան, Հեղինե Բիշարյան